

ԵՐԸԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

Ք,

ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՆԵՐ 4-5 ԴԱՐ

1.

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ՍՍ.ՀՍ.Ս. ՊԱՐԹԵՒ

Հայ ինքնուրոյն գրականութեան հիմնադիրները, մտաւոր վերածնութեան առաջնորդները և մշակութային շարժման փայլուն աստղերը հանդիսանում են երկունշանաւոր և լուսատու դէմքեր — Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, որոնք այնքան նշանակալից դեր են կատարել հայերէն լեզուի, գրականութեան զարգացման գործում և թանկագին ծառայութիւն մատուցել դարաշրջանի նոր սերնդի լուսաւորութեան խնդրում:

Հայ գրականութեան այդ երկու պայծառ դէմքերի շնորհիւ էլ, տառերի գիւտից յետոյ, սկսում է հայ եկեղեցական երաժշտութեան ձևակերպութիւնների շրջանը: Այդ հանգամանքը հաստատում են հայ մատենագրերի աւանդ թողած մի քանի յիշատակարանները: Դրանցից ուշադրաւ է պատմիչ և կինսագիր Կորիւնի վկայութիւնը: Տառերի գիւտի հետ Մեսրոպ Մաշտոցի Հայաստան վերադարձը նկարագրելիս Կորիւնը հայ երաժշտութեան մասին արձանագրել է այսպիսի թանկագին տողեր. «Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն զառնային և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին»:

Մի այլ արժէքաւոր աղբիւր է ձեռագիր «Յայաստաւուրքօի յիշատակարանը, ուր կարդում ենք. «Ակրարին երգս շարականաց և կարգեցին եղանակս ամենայն ձայնից, զորս բաժանեաց ի միմեանց սուրբ հայրագետն Իսահակ Պարթև տասն ձայն»:

Այս պատմական վաւերագրերն էլ նշում են մի կարևոր հանգամանք, որ եթէ Մա-

սիսի պէս Ս. Մեսրոպ Մաշտոցը հայերէն տառերի գիւտով անմահացաւ, ապա Սահակ Պարթևը հայոց ինքնուրոյն գրականութեան առաջին հեղինակը հանդիսացաւ և անմահացաւ «Աստուածաշունչ»ի հոյակապ թարգմանութեամբ: Նոյնպէս նա է համարում հոգևոր երգերի և շարականների ձայնագրութեան առաջին ստեղծագործող արուեստագէտը: Մի հանգամանք պարզ է, որ Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը և Վառձապուհ թագաւորն ստեղծեցին հայ գիրն ու գրականութիւնը և կերտեցին Ոսկեդարը:

Ահա այդ երեք լուսաւոր և պայծառ դէմքերից Սահակ Պարթևի կեանքի սեղմ պատկերը: Ներսէս Մեծի որդին և Պոլսոյ հայութեան պարծանքն է նա, ուր ծնուել է 335 թուին: Իր նախնական և միջնակարգ կրթութիւնն ստանում է իր հօր՝ Մեծն Ներսէսի բացած դպրոցներում: Այնուհետև նրան տեսնում ենք Բիւզանդիոնում, ուր խորանում է և հմտանում յունարէն լեզուի, պատմութեան, արուեստի և գիտութիւնների մէջ: Ետևում նա յայտնի է դառնում ո՛չ միայն որպէս հմուտ յունագէտ, ասորագէտ, պարսկագէտ, այլև հուշակուց է որպէս եկեղեցական գրքերի գիտնական և կրօնական մաղթանքներ գրող բանաստեղծ և առաջնակարգ թարգմանիչ:

Հայոց Սոորով Գ. արքան և ժամանակի լուսաւոր հայ հոգևորականները, բարձր գնահատելով նրա լուրջ պատրաստութիւնը, Ասպուրակէս կաթողիկոսի մահից յետոյ, նրան 373 թուին ձեռնադրում են կաթողիկոս: Մօտ 50 տարի, նա արտակարգ հըմտութեամբ վարում է հայրապետական տաժոյթի պատասխանատու աշխատանքները և շարունակում Մեծն Ներսէսի սկսած կրթական գործունէութիւնը: Դա այն մտայն շրջանն էր, երբ պարսկամոլ հայ նախարարներից ոմանք, Սասանեանների թեւազրանքով, հայ թագաւորական տան հետ պառակտուում են: Նրանք Սահակ կաթողիկոսից պահանջում են, որ միանայ իրենց

հետ և հայ թագաւորի դէմ պարտից արքունիքին բողոքի: Սակայն, իմաստուն և բարի հայրագետը, հաւատարիմ մնալով իր վեհ կոչմանը, ո՛չ միայն նախարարների զիջումը մերժում է, այլև նրանց յորդորում է հրաժարուել իրենց վերասակար որոշումից և տալիս է այսպիսի խորհուրդ. «նոյն իմ հիւանդ ոչխարը չեմ փոխի օտարի առողջ գայլի հետ»: Սակայն, նախարարներից ոմանք ո՛չ միայն Սահակ հայրագետի բարի խորհուրդը չեն լսում, այլև հայոց Խոսրով արքային ամբաստանում են Շապուհի առջև, թէ նա «գաղանի դաշինք ունի յունաց թագաւորի հետ և նրա հետ միշտ թղթերով ու պատգամաւորներով յարարեութեան մէջ է, որ նա է յունասէր Սահակ Պարթևին կաթողիկոս կարգելու: Այս ամբաստանութեան հետևանքով Խոսրով արքան և Սահակ կաթողիկոսը զրկուում են իրենց իշխանութիւնից: Սակայն, վստահապուհ թագաւորի ժամանակ Սահակ Պարթևը կրկին կաթողիկոս նշանակուում և Պարսկաստան գնալով մեծամեծ պատիւներ է ստանում: Այդ ժամանակից էլ նա անմահ Մեսրոպ Մաշտոցի հետ, նուիրում է հայ ժողովրդի լուսաւորութեան վեհ գործին: Այնուհետև, Արշակունեանց վերջին հայ թագաւոր՝ Արտաշէսի շրջանում (422-428 թ.) նա նորից զրկուում է կաթողիկոսական աթոռից:

Սահակ Պարթևի մշակութային գործունէութեան մէջ ուշագրաւ է այն, որ տառերի գրւաթի ժամանակ (404 թ.) նա, վստահապուհ թագաւորի մասնակցութեամբ, Մեսրոպ Մաշտոցին թանկագին աջակցութիւն է ցոյց տալիս: Այնուհետև վաղարշագատում և Հայաստանի զանազան շրջաններում, Ս. Մեսրոպի(*) հետ, բանում են հայկական առաջին դպրոցները, որտեղ հայ երեխաները մայրենի լեզուով ուսանում են և կրթութիւն ստանում: Այդ շրջանում էլ նա ընդունակ աշակերտներին ուղարկուում է Աթէնք, Հռոմ, Ալէքսանդրիա, որպէսզի նրանք բարձրագոյն կրթութիւն ստանան և Հայաստան վերադառնալով՝ հայ ժողովրդի

լուսաւորութեան վեհ գործին նուիրուեն: Սակայն, Սահակ Պարթևի հմայիչ անունը քանդակուած է Ս. Գրքի և առհասարակ եկեղեցական գրականութեան թարգմանական բեղուն աշխատանքների պատմութեան էջերում: Նա «Աստուածաշունչ» թարգմանութիւնը Ս. Մեսրոպի և երէց աշակերտների հետ կատարում է նախ ասորերէնից: Սակայն, արտասահման ուղարկուած աշակերտները 432 թուին Բիւզանդիոնից վերադառնալիս իրենց հետ բերում են «Աստուածաշունչ» ի եթիոպիական յոյն թարգմանութեան ճիշդ ու ստուգուած օրինակը, որի համեմատ Սահակ Պարթևը նախկին թարգմանութիւնը սրբազրում է և կրկին թարգմանում այնքան խնամքով և զբաղանքով այնպիսի մաքուր լեզուով ու ընտիր ոճով, որ համարում է «թագուհի թարգմանութեանց», բոլոր լեզուներով կատարուած թարգմանութիւնների լաւերից մէկը: Այդ հայկապ թարգմանութիւնն էլ մինչև օրս գործածուում է հայոց եկեղեցում:

Բացի «Աստուածաշունչ» թարգմանութիւնից, Սահակ Պարթևը իր լուսագոյն աշակերտների՝ Յովսէփի, Յովհանի, Եղնիկի, Կորիւնի և ուրիշների հետ յունարէնից և ասորերէնից թարգմանում է եկեղեցական շատ նշանաւոր և անհրաժեշտ գրքեր: Այս մասին Կորիւնի «Վարք Մաշտոցի» գրքում կարդում ենք. «Բիսկ երանելի Սահակն առաջ յունարէն լեզուից հայերէն էր զարձրել եկեղեցական գրքերի ամբողջութիւնը և շատ սուրբ հայրագետների իմաստութիւն: Դրանից յետոյ զարձեալ նա Եղնակի (Եղնիկ Կողբացին է) հետ միասին սկսեց (և) առաջուայ յանկարծազիւտ շտապով թարգմանութիւնները հաստատեց բերուած ստոյգ օրինակներով»: Թարգմանում են զլիւսաւորապէս Եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու, Կիւրեղ Աղէքսանդրացու, Կիւրեղ Երուսաղէմացու, Յովհան Ոսկեբերանի և այլ հեղինակների ընտիր գրքերը, որոնցով կրթուում է ու դաստիարակուում ժամանակի նոր սերունդը: Թերևս այդ երևոյթով էլ պիտի բացատրել, որ Սահակ Պարթևը հայ գրականութեան պատմութեան մէջ անմահացել է:

Տրդ զարի հիասքանչ լեզուով Սահակ Պարթևը զրել է նաև կրօնական ճառեր, մեկնութիւններ և «Ժամագրոց աղօթք»:

(*) Ունի գողարկի շարական բանաստեղծութիւններ, որոնք ձայնագրուած են պահոց օրերի ժամերգութեան համար և կոչուում են «Ապաշխարութեան շարականներ», որոնցից ուշագրաւ են «Ողորմեայ» շարականները:

Սակայն, նրա ինքնուրոյն ստեղծագործութեան մէջ պատուաւոր տեղ է զբաղում սկանդինավիկները: Դրանք խրատական-բացատրական կանոններ են, որոնցով նա գծել է եկեղեցականների պարտականութիւնները և ձեւակերպել է ժողովրդի ու հոգեւոր գասփիոխայարարութիւնները: Այդ կանոններով նա պայքար է ծաւալել հայ հոգեորականների շահասիրութեան դէմ և ընդգծել է նրանց հատոյթների աղբիւրները: Ահա թէ ինչո՞ւ հայ եկեղեցու իրաւունքի պատմութեան համար այդ կանոններն ուրոյն արժէք ունեն:

Կան բանասէրներ, որոնք Սահակ Պարթևին են վերագրում քահանայի օրհնութեան և քահանայի ու աշխարհականի թաղման աղօթքները:

Սակայն, մի հանգամանք աւելի արժէքաւորում է Սահակ Պարթևի կերպարը: Դա նրա երաժշտական տաղանդն է: Նա ո՛չ միայն կարգաւորել է հայոց եկեղեցու ժամասացութիւնը, այլև ձայնազրել է հոգեւոր երգեր: Նրա ստեղծագործութիւններն են համարում «Պատարագամատոյց»ը և Աւագ Ծարաթի շարականների մի մասը, որոնք գրաւիչ են իրենց իմաստի խորութեամբ, անսահման պարզութեամբ և ոճային երանգաւորութեամբով:

Հայ ժողովրդի այս մեծատաղանդ դաւաակն իր աչքերն ընդհիշտ փակեց 439 թուին և թաղուեց Տարօնի Աշտիշատ վանքում:

7 րդ Գ Ա Բ

Չ.

ԵՐԱՇԵՏԱԳԷՏ ԿՈՄԻՏՏԱՍ ԿՍԹՈՂՈՒԿՈՍ

Ղրգ դարի առաջին քառորդի հայ երաժշտական մշակոյթի և բանաստեղծական գրականութեան մէջ պատուաւոր տեղ է զբաղում մի վաստակաւոր երաժշտադէտ և բանաստեղծ: Դա Կոմիտաս կաթողիկոսն է, բարձր մշակոյթի տէր մի հոգեորական, որ իր ստեղծագործութիւններով նպաստել է դարաշրջանի երաժշտական և բանաստեղծական արուեստների զարգացման:

Հայ եկեղեցական գրականութեան պատմութեան «քաջահմուտ» այս հոգեորականը, չնորհիւ իր մտաւոր լուրջ պատարաստութեան ու գիտութեան, իր ապրած դարաշրջանում մեծ հեղինակութիւն է վայելում:

Իր ժամանակակիցներից նա սիրում է և բարձր գնահատում որպէս լաւագոյն երաժիշտ, տաղանդաւոր բանաստեղծ և տիպար հոգեորական:

Նրա կեանքի պատմութեան էջերը ձեռք տանում են Արագածոտն գաւառի Աղջ գիւղը, ուր նա ծնուել է նահապետական մի ընտանիքում:

Ուսանում է էջմիածնում, որից յետոյ ստանձնում է «Ս. Հռիփսիմէի» վանքի փակակալի պաշտօնը: Այնուհետև նրան տեսնում ենք Տարօնում, ուր նշանակում է առաջնորդ, ապա՝ Գլակի վանքի վանահայր, իսկ 615 թուին, Արբահամ կաթողիկոսի մահից յետոյ, նստում է Դուինի կաթողիկոսական աթոռի վրայ: Այս շրջանի նրա կեանքի մասին Ղրգ դարի նշանաւոր պատմիչ Սերէոսը, որի պատմութիւնը կարեւոր աղբիւր է մարդպանական շրջանի և արաբական առաջին արշաւանքների պատմութեան համար, հաղորդել է կենսագրական մի քանի տեղեկութիւններ, որոնք ընդգծում են, որ Ղրգ դարում Կոմիտասը յայտնի է դարձել նաև որպէս շինարար: Դեռ 618 թուին նա հիմնովին քանդում է և կերտում Հայաստանի ամենագեղեցիկ կաթողներից մէկը՝ «Հռիփսիմէի» վանքը: Այդ հանգամանքը հաստատում է մի թանկագին վաւերագիր: Դա 618 թուականին գրուած մի ձեռագիր «Ժողովածու» է, որի յիշատակարանում, «Իւրա նշխարաց Սըրբոյն Հռիփսիմեայ» մասում, կարդում ենք. «Եւ եղև յամի քոսներորդի ութերորդի Ապրուէզ Սոսրովու՝ քակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուան Սրբոյն Հռիփսիմէի, ի վաղարշապատ քաղաքի զի կարի ցած էր և մթին շինուածն, որ շինեալ էր ի Սահակայ կաթողիկոսէն: Արդ մինչդեռ քակէին գորմն մատրանն, հանդիպեալ պատահեցան գանձին ծածկելոյ յազարակի ըստ տէրութեան ձայնին, որ էր գանձ բոլորաւէր, լուսաւորիչ, չքնադագեղ, արքունական մարգարտին, այսինքն կուսական մարմնոյն սրբոյ տիկնոջն Հռիփսիմեայ:»

Մեզանից հազար երեք հարիւր երեսուն և եօթը տարի առաջ կերտուած այս գեղեցիկ յուշարձանը, որ այսօր մեզ ցայտուն գազափար է տալիս Ղրգ դարի հայ ճարտարապետների գեղարուեստական նուրբ ձաշակի և արուեստի էութեան մասին, հպարտ

բազմել է Վաղարշապատի մօտ և զբաւիչ է հայկական ճարտարապետութեան ինքնա-տալ սոճով: Այս հոյակապ կոթողի զեղարու-ուեցողական արժէքը տաղանդաւոր ճարտարապետ Թորոս Թորամանեանն ընդգծել է այսպիսի բնորոշ տողերով. «... ի տես այս կոթողին հիացում ազգողը և հանդիսատես-սին յափշտակողը արտաքուստ միմեանց հակառակ ուղղութեամբ, հորիզոնական և ուղղահայեաց ուղիղ գծերի, երբեմն աղեղ-ներով խառն, վսեմ ներդաշնակութեամբ օժտուած գծերն են, որոնք իրենց բարձ-րութեան և լայնութեան մէջ այնպիսի չքնաղ դասաւորութիւն ունեն, որ ամէն տե-սակ քննադատութիւնից բարձր են մնում»:

Հռիփսիմէի տաճարից բացի, Կոմիտաս կաթողիկոսին վերագրում են նաև «Գայ-իանէ» եկեղեցու նորոգութիւնը, որ կառու-ցել էր Եզր կաթողիկոսը: Առհասարակ, 618 թուականը Կոմիտաս կաթողիկոսի շինարարական գործունէութեան պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է զբաւում: Այդ թուին նա քանդել է տալիս նաև Էջմիածնի փայտակերտ գմբէթը և նրա տեղ կոփածոյ քարից նոր ու զեղեցիկ գմբէթ է կառու-ցում: Վերջացնում է նաև Արրահամ կա-թողիկոսի օրով սկսուած Դուինի Ս. Գրի-գոր եկեղեցու շինութիւնը և մի քանի այլ նորոգութիւններ կատարում:

Նշենք և այն, որ նա շինարարական աշխատանքները հետ՝ առանձին ուշադրու-թիւն է դարձնում նաև հայ եկեղեցական-ների ուսման և կրթութեան վրայ:

Սակայն, Կոմիտաս կաթողիկոսն իր դարաշրջանում հոչակում է իր բանաս-տեղծական խոշոր ձիրքով: Նրա ստեղծա-գործական արուեստի պատմութեան մէջ նշանաւոր է «Անձինք նուիրեալք» խորա-գրով ընդարձակ ինքնուրոյն բանաստեղ-ծութիւնը, որ իր բովանդակութեամբ, ար-տայայտութեան ձևով, բանաստեղծական պատկերներով և քնարական ջերմ շնչով արժանի է առանձին ուշադրութեան: Դա Հռիփսիմէի բարեպաշտ կոյսերի նահատա-կութեան նուիրում մի օրհնորգութիւն է, որը սակայն պատահականութեան արդիւնք է: Հռիփսիմէի մատուցել է կոյսի դազաղը, կնքուած Սահակ Պարթևի կնիքով, որով չի համարձակուած բանալ և ինքն ևս կըն-

քում է դազաղը և ամփոփում աւազ խո-րանի տակ: Այդ առիթով էլ հնչեցնում է «Անձինք նուիրեալք» շարականը, որ մինչև այսօր երգւում է Հայոց եկեղեցում: Պատ-մագիր Սեբէոսի վկայութեամբ՝ Կոմիտաս կաթողիկոսն անսահման սիրով սիրում է ու պաշտում Հռիփսիմէի յիշատակը: Թերևս այդ երևոյթով էլ պիտի բացատրել, որ բանաստեղծութիւնը գրուած է ո՛չ միայն անկեղծ և խորը զգացմունքով, այլև իր բովանդակութեան ու բանաստեղծական պատկերների զեղեցիկ ներդաշնակութեամբ զբաւիչ է:

Սակայն, այս զեղեցիկ ստեղծագործու-թիւնն ուշադրաւ է մի այլ էական յատկա-նիշով: Դա սիրային երանգաւորումն է: Կոմիտաս Դրդ դարի առաջին բանաստեղծն է, որ, արհամարհելով ժամանակի նախա-պաշարումները, համարձակ կերպով երգել է սէրն ու զեղեցիկսիրն:

Կոյսերի զեղեցիկութիւնը նա նկարել է այսպիսի բնորոշ տողերով. «Զեր մարմնա-ւոր զեղեցիկութեան պայծառութիւնը յիմա-րեցրեց թագաւորին և հեթանոսներին զար-մանքի ու սարսափի մատնեց: Սքանչելի և սատուածատուր կոյսերի զեղեցիկութեամբ ու սիրով վառուած՝ հրեշտակները մարդ-կանց հետ տօն էին կատարում»:

Նշանակալից է որ բարեպաշտ կոյսերի արտակարգ զեղեցիկութիւնը հրապուրում է ո՛չ միայն թագաւորին, այլև հեթանոսնե-րին, հրեշտակներին և մարդկանց: Կոյսերի աննման զեղեցիկութեան պատճառով էլ անասելի պայքար է սկսում Հռիփսիմէի ու թագաւորի միջև: Տկար Հռիփսիմէն ութը ժամ մաքառում է Տրդատի դէմ և յաղթող հանդիսանում ու անբարտ մնում: Դա Դրդ դարի բանաստեղծական զբաղանդութեան մէջ մի նոր երևոյթ է:

Կոմիտասի բանաստեղծութեան մի այլ հմայքը գաղափարի պաշտամունքն է: Հռիփսիմեան կոյսերն իրենց կրօնական սկզբունքներին և հաւատին ո՛չ միայն հա-ւատարիմ են մնում, այլ արիւթեամբ ու քաջութեամբ պայքարում են աշխարհիկ զգացումները դէմ, այն խորը համոզումով, որ կեանքի վայելքներն ու հրապորդներն ունայն են և անցաւոր, իսկ մնայուն է միայն «երկնաւոր պատկը»: Ահա Կոմիտասի՝ աշխարհի ունայնութեան մասին գծած նը-

կարից մի նմուշ. «Ամբողջ ժամանակ հոգևոր աղօթքներն ու ծոմապահութեան նուիրուած, խորին յուսով զխաղբեցին փորձութիւններն և զանազան լիկանքներն՝ և եղան անթառամ պսակի արժանաւոր ժառանգորդներ»։ Քրիստոնէական այս յոռետեսութիւնը կազմում է Կոմիտասի ստեղծագործութեան զաղափարական զիծը։

«Անձինք նուիրեալք»ի մի այլ յատկանշական գեղեցկութիւնն հրաժշտական արւեստն է։ Դա հայ եկեղեցական երաժշտութեան լաւագոյն յուշարձաններից մէկն է, որը զբաւիչ է իր զգացմունքի ջերմութեամբ ու խորութեամբ և իր ոճային նուրբ երանգաւորութեամբով ցայտուն զաղափար է տալիս վաստակաւոր հոգևորականի երաժշտական արուեստի էութեան մասին։

Ընդգծենք մի այլ երևոյթ։ Այս գողտորիկ շարականը, որ ցայտուն մի նմուշ է «խորհրդային» կոչուած երաժշտական արուեստի, Հայ եկեղեցու Շարակնոցի մէջ ուրոյն տեղ է զբաւում և Դրդ զարից սկսած, ամէն տարի, Հոիփսիմեանց տօնին, Հայոց եկեղեցում երգուել է և երգւում, որի լեզուական պարզութեան ու գեղեցկութեան մասին զաղափար տալու համար զբարառ բնագրից առաջ բերենք մի պատկեր։

«Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի, երկնաւոր նահապետի եւ կուսանք իմաստուցի. Ի պարճանս ձեր բարձրացեալ սօնէ Մայր Սիովն զսեբոքն իւրով։ Բարբառք երկնաւորք լըցին զերկիր, Քանգի հոս անուշից բուրեցայք ի Քրիստոս։ Հոիփսիմէ մեծ խորհուրդ եւ անուց ցանկալի Ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հեռեսակս»։

Նշենք, որ այս ոտանաւորն Իտալացի բանաստեղծ Լուիճի Կարէր Իտալերէն լեզուով թարգմանել է և 1843 թուին տպուել է Վենետիկի — Ս. Ղաղարի վանքում։

Առաջ բերենք նաև Կոմիտասի մասին Յարութիւն Գ. Շալեանի «Հայաստանի կուշնակ»ում զբառ հետեւեալ տողերը. «... Հայ երաժշտութեան պատմութիւնը զժբաղդաբար վաւերական շտա քիչ բան ունի մեզ համար։ Գիտենք միայն թէ եօթներորդ դարուն՝ Կոմիտաս Կաթողիկոս՝ հեղինակը Հոիփսիմեանց շարականին՝ լաւ երաժշտագէտ մըն էր և ինք յօրինած՝ այդ երգին

եղանակը համաձայն Սոսրովային երաժշտական դրութեան մը, զոր կատարելագործողներն եղած են Սարգիս անունով հայ մը և Պարպուտ անունով Զրաղաշտ պարսիկ մը, պարսից Սասանեան Սոսրով երաժշտագէտ արքայի հովանաւորութեան ներքև։ Այս իսկ պատճառաւ է որ երաժշտական այդ դրութիւնը արեւելքի՝ կը կոչուի Սոսրովային»։

Կոմիտասին վերագրում են նաև «Սրբոց Հոիփսիմեանց կանոնի» ուրիշ շարականներ և Ս. Սահակի անունով գրուած բազմաթիւ ճառեր։ Սակայն, հայ բանասիրական գրականութիւնը հիմք ունենալով այդ շարականների և ճառերի կառուցողական ու լեզուական արուեստը, բանաստեղծական պատկերները և այլ էական երևոյթներ, գտնում է որ զբանք Կոմիտասի գրչին չեն պատկանում։ Նոյնպէս նրա անունով զբաւուրում են նաև դասանաբանական թղթեր՝ սվասն հաւատոյն։

Մի հանգամանք այժմ պարզ է, որ Կոմիտաս Կաթողիկոսը Դրդ զարում հոգևորուել է որպէս բանաստեղծ-երաժիշտ։ Նրա հայ բանաստեղծական գրականութեան նըւերած նշանաւոր «Անձինք նուիրեալք»ը, որ գրուատում է Հոիփսիմեանց կոյտերի վեհութիւնն ու կատարած գործերը, իր հրատառանք եղանակով հայ հոգևոր երաժշտական արուեստի լաւագոյն էջերից մէկն է։

Ընդգծուած երևոյթներն էլ նշում են որ իր ստեղծագործութիւններով Կոմիտասը Դրդ զարում Հայաստանում ծաւալուած բանաստեղծական-երաժշտական շարժման լաւագոյն գրօշակակիրներից մէկն է։ Այդ տեսակէտից էլ նա հայ հնագոյն մշակութի պատմութեան մէջ ուրոյն տեղ է զբաւում։

Ա.Ր.Ա.Մ ԵՐԵՎԱՆ

(Շարունակելի՛ 3)

